**DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA**
**ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ**
**Archbishop Khajag Barsamian, Primate**

Թիւ 1355
Ապրիլ 23, 1993

Արժանաշնորհ
Տ. Գարեգին Քհնյ. Գասպարեան
Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուեսթչէսթըր.

Սիրելի Տէր Գարեգին,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Ապրիլ 21, 1993 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 7, 1993-ին, եւ այդ առթիւ ընդրուած են Ծխական Խորհուրդին հինգ անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Լանյըլ Կուլթըն
Շահէն Կիրակոսեան
Մարթա Կիւրահեան
Ռիչըրտ Փափալեան
Մարկրիթ Սակաթէլեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համաձայն Թեմական Կանոնադրութեան՝ Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է ըլլայ երկպատիկ ցանկի մը վրայէն եւ գաղտնի քուէարկութեամբ։

Կ՚օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունիւ

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558